11.	ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ PEDAGOGY AND PSYCHOLOGY ПЕДАГОГИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ НАУКИ

ԽԱՂԱԼԻՔԻ ԵՎ ԽԱՂԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Լ. Ն. ՔՈՒՐՔՉՅԱՆ
Մանկավարժական գիտությունների թեկնածու,
ԳՊՀ հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ,
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան, Տարիքային և մանկավարժական
հոգեբանության ամբիոնի դոցենտ
Ա. Մ. ՍԱՐԳՍՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան, Տարիքային և մանկավարժական
հոգեբանության ամբիոնի հայցորդ

Ժամանակակից հասարակությունում կյանքի սոցիալական պայմանների փոփոխությունը, տեխնիկական առաջընթացն ու ձեռքբերումներն իրենց արտացոլումն են գտել նախադպրոցական տարիքի հոգեբանական առանձնահատկությունների, մասնավորապես՝ խաղային գործունեության կառուցվածքի ու բովանդակության մեջ, և այսօր երեխաներն ունեն «ուրիշ մանկություն», որը տարբերվում է նախորդ սերնդի մանկությունից [31, էջ 311]: Ուսումնասիրություններով հաստատվել է, որ նախադպրոցական տարիքի առաջատար գործունեությունը խաղն է, որի միջոցով ձևավորվում և զարգանում են երեխայի իմացական գործընթացները, հուզակամային և պահանջմունքադրդապատճառային ոլորտները, անձնային որակներն ու վարքային դրսևորումները: Հայտնի է, որ խաղի նյութական հիմքը խաղալիքներն են՝ խաղի համար նախատեսված, հատուկ պատրաստված առարկաներ, որոնք ունեն իրական կյանքի գործողությունները վերարտադրելու հնարավորություններ, և դրանց գլխավոր գործառույթը տարիքին համապատասխան երեխայի գործունեության ակտիվացումն է, ինչը կնպաստի հոգեկանի զարգացմանը [40, էջ 59]:

Խաղային գործունեության ընթացքում բացի խաղալիքներից երեխան օգտագործում է բազմաթիվ «խաղային առարկաներ», որոնք առկա են տվյալ իրադրությունում և կարող են փոխարինել բացակայող խաղալիքներին [52, էջ 3]:

Ներկայումս «ավանդական» խաղալիքներն իրենց տեղը զիջում են խաղալիքների «նոր» սերնդին՝ նորահայտ տրանսֆորմատորների, հրեշների, ռոբոտանման մարդկանց, տարբեր տիկնիկների (Barbi, New born, Bratz, Expression dolls), որոնց բնորոշ են բնականացումը, դետալիզացիան և ավտոմատացումը [28, էջ 298]: «Նոր» սերնդի խաղալիքներն իրենց կառուցվածքային և բովանդակային առանձնահատկություններով գրեթե ոչնչով չեն զիջում իրական մարդուն. դրանք զինված են այնպիսի պարագաներով, որոնք անհրաժեշտ կլինեն խաղի ընացքում (բազմապիսի հագուստ, կոշիկներ, շպարի պարագաներ, հեծանիվներ, աքսեսուարներ և այլն): Խաղալիքը դառնում է ոչ թե խաղի միջոց, այլ «ինքնաբավ» իր, որը նախատեսված է ինքն իր որակները, հատկանիշները բավարարելու համար: Խաղային գործունեության ընթացքում երեխային այլևս հարկավոր չէ «կենդանացնել» տիկնիկը, դրա միջոցով արտահայտել իր հույզերն ու ապրումները, մտածել, հորինել, ստեղծագործել կամ երևակայել խաղային իրադրություններ, քանի որ խաղալիքը դուրս է մղում, «ճնշում է» երեխային և խոչընդոտում է նախադպրոցականների խաղային հմտությունների ձևավորմանը:

Սույն հոդվածում ներկայացվում են խաղային գործունեության ընթացքում նախադպրոցականների կողմից խաղալիքների և խաղային առարկաների բազմաֆունկցիոնալ կիրառության հոգեբանական ուսումնասիրությունների արդյունքները՝ նկատի ունենալով, որ խաղային իրադրությանը համապատասխան միևնույն խաղալիքը և առարկան երեխան կարող է կիրառել տարբեր ֆունկցիաներով: Բացահայտվել են խաղալիքների և խաղային առարկաների բազմաֆունկցիոնալ կիրառման հնարավորությունները՝ կրտսեր, միջին և ավագ նախադպրոցականների խաղային գործունեության օրինակով:

Հոգեբանական ուսումնասիրությունները կատարվել են՝ հաշվի առնելով Պատմամշակութային տեսության շրջանակներում Ն.Վ.Վերեսովի կողմից առանձնացված հետևյալ 5 սկզբունքները [46,էջ 83].

1. Կատեգորիայի սկզբունք, ըստ որի ուսումնասիրության ընթացքում հարկավոր է արհեստականորեն ստեղծել այնպիսի իրադրություն, որը սոցիալական հարաբերությունների արդյունքում երեխայի մեջ կձևավորվի առկա խնդրի լուծում և արդյունքում նախադրյալներ կստեղծվեն, որպեսզի միջհոգե-

կան (ինտերահոգեկան) ֆունկցիաները վերածվեն ներհոգեկանի (ինտրահոգեկանի):

2. Բնական և իդեալական ձևերի փոխազդեցության սկզբունք, ըստ որի չկա զարգացում, եթե չկա իրական՝ բնական, և իդեալական՝ մշակութային ձևերի միջև կապ: Ուսումնասիրությունների ընթացքում երկու ձևերն էլ պետք է առկա լինեն (բարձրագույն, իդեալական ձևը պետք է անպայման ուսումնասիրվի իրականի հիմքի վրա):

3. Զարգացման գործիքների սկզբունք, ըստ որի՝ անհրաժեշտ է հստակ սահմանել հետազոտության գործիքների հավաքածուները և ստեղծել պայմաններ, որոնցում փորձարկվողն ինքը դրանք կհայտնաբերի, կկիրառի և կկատարելագործի:

4. Արդյունքների կայունության սկզբունք. ըստ պատմամշակութային տեսության՝ հոգեբանական նորագոյացությունները զարգացման արդյունք են, այդ պատճառով ուսումնասիրությունների ընթացքում հարկավոր է ստեղծել երեխայի մտավոր ընդունակությունները զարգացնող պայմաններ, և ձեռք բերված զարգացումը պետք է լինի կայուն, ոչ մեխանիկական:

5. Հիմնաքարերի սկզբունքը, ըստ որի՝ հետազոտության ժամանակ նախ հարկավոր է ուսումնասիրել մեզ անհրաժեշտ հոգեկան ֆունկցիան իր բնական պայմաններում՝ «մաքուր ձևով»:

Հոգեբանական հետազոտություններն անցկացվել են 3 փուլով: Սույն հոդվածում ներկայացվում են ուսումնասիրությունների առաջին՝ արձանագրող փուլի արդյունքները:

Հետազոտությանը մասնակցել է ընդհանուր թվաքանակով 60 նախադպրոցական՝ կրտսեր (3-3.5 տարեկան), միջին (4-5 տարեկան) և ավագ (5-6 տարեկան)՝ յուրաքանչյուր խմբում հավասարաչափ բաշխվածությամբ

Հետազոտության ընթացքում կատարվել է նախադպրոցականների ազատ խաղային գործունեության հոգեբանական դիտում և դիտման արդյուքների վերլուծություն՝ նպատակ ունենալով պարզել, թե նախադպրոցականները.

- ✓ ազատ խաղային գործունեությունում որ խաղալիքը կամ առարկան կընտրեն,
- ✓ խաղային ինչ գործողություններ կկատարեն ընտրված խաղալիքի կամ առարկայի հետ, այսինքն՝ կիրառումն ըստ իր առաջնային նշանակության և բազմաֆունկցիոնալ կիրառություն,
- ✓ ազատ խաղային գործունեությունում ինչ դերեր կիրականացնեն:

Նախադպրոցականների յուրաքանչյուր խմբում ազատ խաղերի հոգեբանական դիտումն իրականացվել է 5 օր ընդմիջումներով՝ խուսափելու համար խաղերի բովանդակության կրկնությունից: Նախադպրոցականներին տրվել է միևնույն հրահանգը. «Սիրելի՛ երեխաներ, այժմ ձեր խաղի ժամն է, այսօր կարող եք խաղալ ինչ կցանկանաք»: Կրտսեր, միջին և ավագ նախադպրոցականների յուրաքանչյուր խմբում ընտրվել են խաղալիքների տարբեր հավաքածուներ, որոնցում ներառվել են՝ ա) խաղալիքներ, որոնք իրենց կառուցվածքով կարող են կիրառվել երեխաներին ծանոթ առաջնային, հիմնական բովանդակությամբ, և բ) խաղալիքներ և խաղային առարկաներ, որոնք իրենց կառուցվածքով, բացի առաջնային ու հիմնական նշանակությունից, հնարավորություն են տալիս նախադպրոցականին խաղային իրադրություններում դրանք փոխարինելու և օգտագործելու տարբեր ֆունկցիաներով ու նշանակությամբ [51, էջ 107]:

Առաջին խաղի ընթացքում խաղալիքների հավաքածուում գերակշռել են առաջնային բովանդակությամբ խաղալիքներ, իսկ երկրորդում՝ խաղային առարկաներ: Խաղասենյակում դրվել են շրջված սեղան, կողքին՝ տուփեր ու զամբյուղներ՝ տարբեր չափսերի, խաղալիքների հավաքածուները դրվել են մի անկյունում՝ մեծ արկղերի մեջ:

Կրտսեր նախադպրոցականների ազատ խաղային գործունեության հոգեբանական դիտման արդյունքները ցույց են տալիս, որ

- ✓ կրտսեր նախադպրոցականները խաղային իրադրությունում ընտրում են խաղալիքներ և առարկաներ, որոնք իրենց ծանոթ են արտաքին կառուցվածքով, հատկանիշներով ու առաջնային բովանդակությամբ,
- ✓ կրտսեր նախադպրոցականների խաղի բովանդակությունում գերակշռում է մեծահասակի՝ առարկաների հետ կատարած գործողությունների ընդօրինակումը՝ ըստ դրանց առաջնային նշանակության:
- ✓ ընտրված յուրաքանչյուր խաղալիք կամ առարկա երեխայի կողմից կիրառվում է միայն մեկ ֆունկցիայով,
- ✓ խաղային դերերը երեքն էին՝ մայրիկ, հայրիկ և վարորդ, երեխաները հիմնականում խաղային գործողություններ էին կատարում ընտրած խաղալիքի կամ խաղային առարկայի հետ՝ առանց որևէ դեր իրականացնելու,
- ✓ խաղի ժամանակ կրտսեր ն/դ-ները կարողանում են բացակայող խաղալիքների փոխարեն օգտագործել խաղային առարկաներ, բայց մեկ խաղի ընթացքում միայն մեկ կոնկրետ ֆունկցիայով: Այսպես՝ երեխան խորանարդիկով տուն է կառուցում շան համար, բայց այդ նույն խորանարդիկները նա չի օգտագործում որպես շուն՝ խաղալիքի փոխարեն: Շունը նա պատկերում է

փայտիկներով: Հարցին, թե ինչու նույն խորանարդերով շուն չես պատրաստել, պատասխանում է, որ դրանք արդեն օգտագործել է որպես տան կառուցման նյութ:

Աղյուսակ 1-ում և 2-ում ներկայացված են կրտսեր նախադպրոցականների ազատ խաղային գործունեության արդյունքները:

Աղյուսակ 1.

Կրտսեր նախադպրոցականների առաջին ազատ խաղային գործունեության արդյունքները

Խաղալիքի, խաղային առարկայի տեսակը	Ընտրությունների քանակը	Կատարվող գործողությունները		Իրականացվող դերը
		Խաղալիքի, խաղային առարկայի բազմաֆունկցիոնալ կիրառություն	Խաղալիքի, խաղային առարկայի կիրառումն ըստ իր առաջնային նշանակության	
Կապավոր, հանգուցային տիկնիկներ	0	0	0	-
սովորական մեծ տիկնիկներ	3	-	ուտեցնում են, քնեցնում, հագցնում հագուստ	մայրիկ
հագուստ տիկնիկների համար	3	-	հագցնում են տիկնիկին	-
օրորոց՝ տիկնիկի համար	3	-	քնեցնում են - տիկնիկին	մայրիկ
կտորներ	1	-	որպես ծածկոց	-
կավիճներ, թղթեր	-	-	-	-
մեծ և փոքր ավտոմեքենաներ	6	-	վարում են	հայրիկ, վարորդ
շարժվող - խաղալիքներ	4	-	դիտում են խաղալիքի շարժվելը	-
պլաստմասե խաղալիքներ	-	-	-	-
փափուկ խաղալիքներ	2	-	ուտեցնում են, քնեցում	
խորանարդիկներ	5	կառուցում են աշտարակ, տուն, սենյակ՝ տիկնիկի համար	-	-
բուրգ	-	-	-	-
գնդակներ	-	-	-	-
փայտիկներ	3	կառուցում են տնակ՝ շան համար	-	-
	-	-	-	-

Աղյուսակ 2.

Կրտսեր նախադպրոցականների երկրորդ ազատ խաղային գործունեության արդյունքները

Խաղալիքի, խաղային առարկայի տեսակը	Ընտրությունների քանակը	Կատարվող գործողությունները		Իրականացվող դերը
		Խաղալիքի, խաղային առարկայի բազմաֆունկցիոնալ կիրառությունը	Խաղալիքի, խաղային առարկայի կիրառումն ըստ իր ուղղակի նշանակության	
կտորներ	3	որպես տիկնիկ	հագուստ՝ տիկնիկի համար	մայրիկ
կավիճներ, թղթեր	-	-	-	
ոչ մեծ զամբյուղներ և տուփեր	4	-	որպես բանջարեղենի և մրգերի աման	
խորանարդիկներ	8	կառուցում են աշտարակ, տուն, սենյակ՝ տիկնիկի համար, որպես բանջարեղեն և միրգ	-	մայրիկ հայրիկ
բուրգ	-	-	-	
գնդակներ	-	-	-	
փայտիկներ	3	կառուցում են տնակ՝ շան համար	-	մայրիկ, հայրիկ
շրջված սեղան	1	տիկնիկի համար մահճակալ	-	

Միջին նախադպրոցականների ազատ խաղային գործունեության հոգեբանական դիտման արդյունքները ցույց են տալիս, որ.

✓ միջին նախադպրոցականները խաղային իրադրությունում ընտրում են խաղալիքներ և առարկաներ, որոնք իրենց ծանոթ են արտաքին կառուցվածքով, հատկանիշներով ու առաջնային բովանդակությամբ,

✓ միջին նախադպրոցականների խաղի բովանդակությունում առկա է մեծահասակի՝ առարկաների հետ կատարած գործողությունների ընդօրինակում, բայց դրան զուգահեռ նրանք կարողանում են նաև ստեղծել խաղային իրադրություններ և ընտրել դրանց համապատասխան խաղալիքներ,

✓ ընտրված յուրաքանչյուր խաղալիք կամ առարկա երեխայի կողմից կիրառվում է միայն մեկ, հազվադեպ՝ երկու ֆունկցիայով,

✓ խաղի ընթացքում դրսևորվում են երկու հոգեբանական մեխանիզմներ, որոնք բնորոշ են միջին ն/դ-ների խաղին՝ ընդօրինակումը և մրցակցությունը, որը գաղտնի բնույթ է կրում:

✓ խաղի ընթացքում գերակշռում էր միայնակ կամ զույգերով խաղը:

Աղյուսակ 3.-ում և 4.-ում ներկայացված են միջին նախադպրոցական-ների ազատ խաղային գործունեության արդյունքները:

Աղյուսակ 3.

Միջին նախադպրոցականների առաջին ազատ խաղային գործունեության արդյունքները

Խաղալիքի, խաղային առարկայի տեսակը	Ընտրու-թյունն-երի քա-նակը	Կատարվող գործողությունները		Իրա-կանաց-վող դերը
		Խաղալիքի, խաղային առարկայի բազմաֆունկցիոնալ կիրառությունը	Խաղալիքի, խաղային առարկայի կիրառումն - ըստ իր առաջնային - նշանակության	
սովորական մեծ տիկնիկ	0	0	0	-
տիկնիկների-ընտանիք՝ մայրը, հայրը, դուստրը, որդին	3	-	ուտեցնում են, - քնեցնում, հագցնում հագուստ	մայրիկ
տուն՝ տիկնիկների համար	3	-	հագցնում են տիկնիկին	-
խաղալիք, կահույք և սպասքեղեն	3	-	քնեցնում են տիկնիկին	մայրիկ
կտորներ՝ բազմա-գույն	-	որպես գործած հագուստ:	-	տատիկ
թղթեր՝ գունավոր, տարբեր չափսերի, անվտանգ սոսինձ	-	-	-	-
տիկնիկների համար հագուստ, որը դրված է պայուսակում	6	-		
գունավոր մատիտներ	2, 2	-		-
փայտիկներ, մուրճ	-	որպես շյուղեր		հայրիկ
մեքենաներ՝ մեծ, փո-քրը և միջին չափսերի	2, 3	կառուցում են աշտարակ, տուն, սենյակ՝ տիկնիկի համար	-	-
փափուկ և պինդ նյութերից պատ-րաստված խաղալիք կենդանիներ՝ արջ, շուն, կատու, վագր, ձի, գորտ, սարդ և	-	-	-	-

այլն				
դատարկ տուփեր և տարաներ	-	-	-	-
գնդակներ	3	կառուցում են տնակ շան համար	-	-
բուլավաներ	-	որպես կաթի շիշ	-	-
բուրգեր				
խորանարդիկները		որպես ճաշի պարունակություն,		մայրիկ

Աղյուսակ 4.

Միջին նախադպրոցականների երկրորդ ազատ խաղային գործունեության արդյունքները

Խաղալիքի, խաղային առարկայի տեսակը	**Ընտրությունների քանակը**	**Կատարվող գործողությունները**		**Իրականացվող դերը**
		Խաղալիքի, խաղային առարկայի բազմաֆունկցիոնալ կիրառություն	**Խաղալիքի, խաղային առարկայի կիրառումն ըստ իր ուղղակի նշանակության**	
կտորներ	3	որպես տիկնիկ	հագուստ տիկնիկի համար	մայրիկ
բազմագույն կտորներ	-	-	-	
դատարկ տուփեր և տարաներ	4	-	որպես բանջարեղենի և մրգերի աման	
խորանարդիկներ	8	կառուցում են աշտարակ, տուն, սենյակ՝ տիկնիկի համար, որպես բանջարեղեն և միրգ	-	մայրիկ հայրիկ
բուրգ	-	-	-	
գնդակներ	-	-	-	
փայտիկներ	3	կառուցում են տնակ՝ շան համար	-	մայրիկ, հայրիկ
շրջված սեղան	1	որպես տիկնիկի համար մահճակալ	-	
մուրճ				
բուլավաներ				

Ավագ նախադպրոցականների ազատ խաղային գործունեության արդյունքների վերլուծությունից պարզվում է, որ նրանց խաղի բովանդակությունը երեխաների համար նոր չէր, որովհետև շատ հմուտ ձևով միանգամից բաժանվեցին խմբերի և սկսեցին խաղալ: Խաղի ընթացքում նրանք միմյանց դիմում էին ուրիշ անուններով և պարզվեց, որ նրանց ծնողների անուններն են: Խաղալիքի բազմաֆունկցիոնալ օգտագործման դեպքերը հետևյալն էին. փայտիկն ու խորանարդը միասին՝ շերեփ, խորանարդը՝ հեռախոս, խորանարդը՝ կարտոֆիլ, մակարոն, թուղթը՝ աղ, փայտիկները՝ մկրատ, բուլավան՝ մազի լաք: Ի տարբերություն կրտսեր և միջին նախադպրոցականների՝ ավագ նախադպրոցականների խաղում դրսևորվեցին խաղալիքների և խաղային առարկաների բազմաֆունկցիոնալ օգտագործման դեպքեր, բայց դրանք բավարար չեն տվյալ տարիքի խաղային գործունեության բովանդակության իրագործման համար:

Աղյուսակ 5-ում և 6-ում ներկայացված են միջին նախադպրոցականների ազատա խաղային գործունեության արդյունքները:

Աղյուսակ 5.

Ավագ նախադպրոցականների առաջին ազատ խաղային գործունեության արդյունքները

Խաղալիքի, խաղային առարկայի տեսակը	Ընտրությունների քանակը	Կատարվող գործողությունները		Իրականացվող դերը
		Խաղալիքի, խաղային առարկայի բազմաֆունկցիոնալ կիրառություն	Խաղալիքի, խաղային առարկայի կիրառումն ըստ իր առաջնային նշանակության	
սովորական մեծ տիկնիկ	0	0	0	-
տիկնիկների ընտանիք՝ մայրը, հայրը, դուստրը, որդին	3	-	ուտեցնում են, քնեցնում, հագցնում հագուստ	մայրիկ
տուն՝ տիկնիկների համար	3	-	հագցնում են տիկնիկին	-
խաղալիք, կահույք և սպասքեղեն	3	-	քնեցնում են տիկնիկին	մայրիկ
կտորներ՝ բազմագույն	-	որպես գործած հագուստ	-	տատիկ
թղթեր՝ գունավոր, տարբեր չափսերի, անվտանգ սոսինձ	-	-	-	-

տիկնիկների համար հագուստ, որը դրված է պայուսակում	6	-		
գունավոր մատիտներ	2, 2	-		-
փայտիկներ, մուրճ	-	որպես շյուղեր		հայրիկ
մեքենաներ՝ մեծ, փոքր և միջին չափսերի	2, 3	կառուցում են աշտարակ, տուն, սենյակ՝ տիկնիկի համար	-	-
փափուկ և պինդ նյութերից պատրաստված խաղալիք կենդանիներ՝ արջ, շուն, կատու, վագր, ձի, գորտ, սարդ և այլն	-	-	-	-
դատարկ տուփեր և տարաներ	-	-	-	-
գնդակներ	3	կառուցում են տնակ շան համար	-	-
բուլավաներ	-	որպես կաթի շիշ	-	-
բուրգեր				
խորանարդիկները		որպես ճաշի պարունակություն		մայրիկ

Աղյուսակ 6.

Ավագ նախադպրոցականների երկրորդ ազատ խաղային գործունեության արդյունքները

Խաղալիքի, խաղային առարկայի տեսակը	Ընտրողի սեռը	Ընտրությունների քանակը	Կատարվող գործողությունները		Իրականացվող դերը
			Խաղալիքի, խաղային առարկայի բազմաֆունկցիոնալ կիրառություն	Խաղալիքի, խաղային առարկայի կիրառումն ըստ իր ուղղակի նշանակության	
կտորներ	իգական	3	որպես տիկնիկ	հագուստ տիկնիկի համար	մայրիկ
բազմագույն կտորներ	-	-	-	-	
դատարկ տուփեր և տարաներ	իգական	4	-	որպես բանջարեղենի և մրգերի աման	

խորանարդիկ-ներ	արա-կան, իգա-կան	6	կառուցում են աշտարակ, տուն, սենյակ՝ տիկնիկի համար՝ որ-պես բանջա-րեղեն և միրգ	-	մայրիկ հայրիկ
բուրգ	-	-	-	-	
գնդակներ	-	-	-	-	
փայտիկներ	արակա ն	3	կառուցում են տնակ՝ շան համար	-	մայրիկ, հայրիկ
շրջված սեղան	իգա-կան	1	տիկնիկի համար՝ մահ-ճակալ	-	
մուրճ					
բուլավաներ					

Այսպիսով՝ կրտսեր, միջին և ավագ նախադպրոցական խմբերում ազատ խաղերի վերլուծության արդյունքում բացահայտեցինք խաղալիքների բազ-մաֆունկցիոնալ կիրառելիության հետևյալ դրսևորումները.

1. Կրտսեր նախադպրոցական տարիքում խաղալիքները և խաղային առարկաները կիրառվում են ըստ առաջնային նշանակության:

2. Միջին նախադպրոցականների խմբում ևս դրսևորվում է խա-ղալիքների առաջնային կիրառություն, բայց ի տարբերություն կրտսեր նախադպրոցականների, խաղային գործունեության ընթացքում երեխաները կարողանում են խմբային համագործակցության միջոցով միմյանց ընդօրի-նակելով խաղային առարկաները օգտագործել տվյալ իրադրությունում բա-ցակայող անհրաժեշտ խաղալիքի փոխարեն:

3. Ավագ նախադպրոցականների խաղը չնայած իր բովանդակությամբ նման էր միջին նախադպրոցականների խաղին, բայց նրանք կարողանում են կիրառել խաղային առարկաները այլ նշանակությամբ և գործառույթով:

Այսպիսով՝ նախադպրոցականների խաղային հմտությունների մակար-դակը չափվել է ըստ խաղի ընթացքում նրանց կողմից ա) ազատ խաղային գործունեությունում խաղալիքի կամ առարկայի ընտրության, բ) ընտրված խաղալիքի կամ առարկայի հետ կատարվող խաղային գործողությունների, գ) ազատ խաղային գործունեությունում իրականացվող դերերի:

Վերը նշված չափանիշների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ նախադպրոցականների, մասնավորապես՝ ավագ խմբում խաղային հմտու-

թյունների մակարդակը բավարար չէ խաղային իրադրություններում խաղալիքների և խաղային առարկաների բազմաֆունկցիոնալ օգտագործման համար: Բնականաբար, երեխաները չեն տիրապետում նման հմտությունների և դրանց ձևավորմանն ու զարգացմանը պետք է նպաստեն նախադպրոցական հաստատությունների մանկավարժները:

Բանալի բառեր *- խաղ, խաղային իրադրություն, գործունեություն, հոգեբանական դիտում, նախադպրոցական տարիք, խաղալիք*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Смирнова Е. О., Абдулаева Е. А., Рябкова И. А., Филиппова И. В., Шеина Е. Г.**, Ребенок в современном обществе;сборник науьных статеи, Москва 2007,с. 291-298
2. **Смирнова Е. О.**, ”Другое детство”, сборник науьных статеи, Москва 2009,с.311-326
3. **Эльконин Д. Б.,** Психология игры. М.,1978
4. Scheme of mediating [12, p. 79] Nikolai Veresov Культурно-историческая психология 4/2010
5. Карин Нойшюц Куклы — своими руками / Пер. с швед. - М.:2001. - 192 с.
6. Ольга Дыбина: Из чего сделаны предметы. Игры-занятия для дошкольников Дыбина Ольга Витальевна 2013 г.

ВОЗМОЖНОСТИ МНОГОФУНКЦИОНАЛЬНОГО ПРИМЕНЕНИЯ ИГРУШЕК И ИГРУШЕЧНЫХ ПРЕДМЕТОВ В ПРОЦЕССЕ ИГРОВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ДОШКОЛЬНИКОВ

Л. Н. КУРКЧЯН
Кандидат педагогических наук,
заведующий кафедрой общественных наук ГГУ,
доцент кафедры возрастной и педагогической психологии
Армянского государственного
педагогического университета им Х. Абовяна
А. М. САРГСЯН
Соискатель кафедры возрастной и педагогической психологии
Армянского государственного
педагогического университета им Х. Абовяна

В статье представлены результаты психологических исследований многофункционального применения игрушек и игрушечных предметов дошкольниками в процессе игровой деятельности с учетом того, что в соответствии с ситуацией одну и ту же игрушку или предмет ребенок может использовать для различных функций. Выявлены возможности многофункционального применения игрушек и игрушечных предметов на примере игровой деятельности младшего, среднего и старшего дошкольного возраста.

THE POSSIBILITIES OF MULTIFUNCTIONAL USE OF TOYS AND GAME ITEMS DURING THE PRESCHOOLERS GAME ACTIVITY

L. N. QURQCHYAN
PhD of Pedagogical Sciences,
Head of GSU Chair of Social Sciences
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Assistant Professor of the Chair of Age and Educational Psychology
A. M. SARGSYAN
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Researcher of the Chair of Age and Educational Psychology

The article presents the results of psychological research of multifunctional application of toys and game items by preschoolers during their game activity considering that the toy fits the game situation may be used with different functions. The possibilities of multifunctional use of toys and game items are detected by junior, middle and senior preschoolers examples.